

12740



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 21 » 11 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 250 - 24

Նախաձեռնող՝

«Էդգար Մայնինգ» ՍՊԸ
ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, 42-44

Գործունեությունը՝

Լանջադրյուրի բազալրի հանքավայրի օգտակար
հանածոյի արդյունահանում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 250 - 24

«21» նոյեմբերի 2024թ.

Կոտայքի մարզի Լանջաղբյուրի բազալտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Էդգար Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն «Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Հրազդան համայնք Լեռնանիստ բնակավայր

Ներածական մաս. Կոտայքի մարզի Լանջաղբյուրի բազալտի հանքավայրի արդյունահանման տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի՝ 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «թ» ենթակետի, դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Լանջաղբյուրի բազալտի հանքավայրը գտնվում է Հրազդան քաղաքից դեպի հյուսիս-արևելք 9.0 կմ հեռավորության վրա: Հանքավայրի մոտակա բնակավայրը՝ Լեռնանիստ գյուղը գտնվում է հայցվող տեղամասից մոտ 6.0 կմ հեռավորության վրա: Լանջաղբյուրի բազալտի հանքավայրի պաշարները հաստատվել են նախկին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի կից երկրաբանական վարչության պաշարների տեղական հանձնաժողովի կողմից 21.04.1969թ-ին թիվ 184 արձանագրությամբ, հետևյալ քանակներով և կարգերով՝ A կարգով՝ 219.0հազ.խմ B կարգով՝ 397.0 հազ.խմ C1 կարգով՝ 1726.0 հազ.խմ ընդամենը՝ 2342.0 հազ.խմ: Շինարարական քարերի արտադրության բլոկների ելքը կազմում է 39%: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 11.08.2023թ-ի թիվ Ֆ-310/23 տեղեկանքի՝ հանքավայրի մնացորդային պաշարները 01.01.2023թ. դրությամբ (01.01.2023թ-ի դրությամբ առկա տեղեկատվությամբ), ընդհանուր A+B+C1 կարգերով կազմում են 2136.507 հազ.խմ, այդ թվում՝ A կարգով 103.0 հազ.խմ, B կարգով՝ 307.507 հազ.խմ և C1 կարգով՝ 1726.0 հազ.խմ:

Հանքավայրի ազատ, տրամադրման ենթակա, մնացորդային պաշարները 01.06.2023 թվականի դրությամբ, ընդհանուր A+B+C1 կարգերով կազմում են 1461.566 հազ.խմ: «Էդգար Մայնինգ» ՍՊ ընկերությունը նախատեսում է շահագործել հանքավայրի ողջ արտադրման ենթակա մնացորդային պաշարը՝ 1461566.0 խմ: Մակաբացման ապարների ծավալը կազմում է 138235.0 խմ: Բացահանքի օտարման տարածքը կազմում է 19.08հա, նրա վերջնական




եզրագծի մեջ ներառված օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 1461566.0 խմ: Արդյունահանվող օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 1442076.0 խմ: Մակաբացման ապարների ծավալը կազմում է 138235.0 խմ, այդ թվում հողաբուսական շերտինը՝ 28320.0 խմ: Բացահանքի գործողության ժամկետը՝ 20 տարի:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

1 Y = 8488212.0	X = 4478297.0
2 Y = 8488225.7	X = 4478937.0
3 Y = 8488528.0	X = 4478930.5
4 Y = 8488750.0	X = 4478868.0
5 Y = 8488840.1	X = 4478733.6
6 Y = 8488798.5	X = 4478754.3
7 Y = 8488670.0	X = 4478792.0
8 Y = 8488658.0	X = 4478829.0
9 Y = 8488633.0	X = 4478827.0
10 Y = 8488648.1	X = 4478798.8
11 Y = 8488562.0	X = 4478836.0
12 Y = 8488561.0	X = 4478848.0
13 Y = 8488540.0	X = 4478863.0
14 Y = 8488528.0	X = 4478845.0
15 Y = 8488533.0	X = 4478841.0
16 Y = 8488493.6	X = 4478611.8
17 Y = 8488490.0	X = 4478405.0

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Լանջադրյուրի բազալտի հանքավայրի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները կանխորոշում են նրա մշակումը՝ բաց լեռնային աշխատանքների եղանակով: Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է՝ տարեկան 73080.0 խմ ըստ բազալտի մարվող զանգվածի, 72105.0 խմ ըստ բազալտի արդյունահանվող զանգված: Բացահանքում լեռնային աշխատանքները կատարվելու են շուրջտարյա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը տարում ընդունվում է 260 օր, օրական մեկ՝ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով: Բացահանքի բացումը կատարվելու է դեպի 2290 մ նիշ ունեցող հորիզոն ներքին թեք կիսախրամի անցումով: Խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 6.0 մ, երկարությունը՝ 351.0 մ: Հանքավայրի բացումը սկսվելու է 2290. Օմ հորիզոնից: Կիսախրամների անցումը կատարվելու է բուլդոզեր, էքսկավատոր, ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով: Մակաբացման ապարները ներկայացված են ժամանակակից էյուվիալ դեյուվիալ նստվածքներով (ավազակավերով և անդեզիտա-բազալտային բեկորներով), որոնց ընդհանուր ծավալը բացահանքի տարածքում կազմում է 138235.0 խմ, այդ թվում հողաբուսական շերտինը՝ 28320.0 խմ: Մակաբացման ապարները բուլդոզերի օգնությամբ հրվում և կուտակվում են աշխատանքային հրապարակից 15-20 մ հեռավորությամբ վրա: Հերթափոխում նշված ապարների ծավալները կազմելու են 26.6 խմ/հերթափոխ և դրանց տեղափոխումը իրականացվում համալիրով: Հողաբուսական շերտը պահեստավորվում է առանձին: Շահագործման առաջին տարվա ընթացքում դեպի ներքին լցակույտեր կտեղափոխվեն և մակաբացման ապարների հետ կպահեստավորվեն սակավրկների արտադրության ընթացքում առաջացող արտադրական թափոնները 43984.0 խմ



ընդհանուր ծավալով: Նախատեսվում է Հրազդան քաղաքում գտնվող բլոկների վերամշակման արտադրամասին կից կառուցել ՋՏ կայան՝ շինարարական խիճ ստանալու համար, որից հետո, արտադրական թափոնները՝ շահագործման 2-րդ տարուց, կտեղափոխվեն Հրազդան քաղաք: ՋՏԿ կտեղափոխվի նաև լցակայանում պահեստավորված 43984.0 խմ ծավալով արտադրական թափոնը: Հաշվի առնելով, որ հանքավայրի շահագործման աշխատանքներին զուգահեռ, շահագործման 3-րդ տարուց, երբ կառաջանան բավականին ազատ մշակված տարածքներ, դեպի 2280.0 մ հորիզոնի մշակված տարածքներ կսկսվեն տեղափոխվել բացահանքի շահագործման ընթացքում առաջացող լցակայանային ապարները՝ այլուվիալ-դելյուվիալ ապարները և հողաբուսական շերտը:

Հողաբուսական շերտի (հողի բերրի շերտ) ընդհանուր ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 28320.0 խմ, որի հեռացումը և հետագա պահպանումը բացահանքի տարածքից կատարվելու է ՀՀ կառավարության 08.09.2011թ-ի թիվ 1396-Ն և 02.11.2017թ-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան: Բացահանքի եզրագծում առկա մակաբացման ապարները, շահագործման 5 տարիների ընթացքում՝ 34615.0 խմ ընդհանուր ծավալով, բաղկացած են լինելու 25215.0 խմ այլուվիալ դելյուվիալ ապարներից և 9400.0 խմ հողաբուսական շերտից: Վերոգրյալ ապարները տեղադրվում են ներքին լցակայաններում, տեղադրված բացահանքի 2280.0 մ հորիզոնում և պահպանվում առանձին առանձին, իրար հարևանությամբ: Մակաբացման ապարների լցակայանի հիմքի մակերեսը կազմում է 0.7 հա, բարձրությունը՝ 5.0 մ, հողաբուսական շերտի ապարներինը՝ 0.23 հա, բարձրությունը՝ 4.0 մ: Հողաբուսական շերտի ապարները լցակայանում պահպանվելու են ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան: Շահագործման 6 րդ տարուց, շահագործման ընթացքում առաջացող մակաբացման ապարները՝ տարեկան 6923.0 խմ ծավալով, սկսվելու են բացահանքի մշակված տարածքներում տեղադրվելու են հետևյալ կարգով՝ սկզբում փոփում են մակաբացման ապարները, իսկ դրանց վրա՝ հողաբուսական շերտի ապարները: Վերջնական ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին, որի ընթացքում բացահանքի տարածքում կփոփվեն նաև 1-5 տարիներին 2280.0 մ հորիզոնում տեղադրված մակաբացման և հողաբուսական շերտի ապարները՝ 34615.0 խմ ընդհանուր ծավալով: Ռեկուլտիվացիայի ենթարկված ընդհանուր տարածքը կազմելու է 19.08 հա:

Բլոկների արտադրության ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ 169.2 խմ/հերթ ծավալով բուլդոզերի միջոցով տեղափոխվելու են 10-15 մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև կուտակված թափոնները CAT մակնիշի էքսկավատորով բարձվում են ավտոինքնաթափերի մեջ և առաջին տարում տեղափոխվում ներքին լցակայան: Շահագործման 2-րդ տարուց սկսած թափոնները կտեղափոխվեն Հրազդան քաղաք, որտեղ նախատեսվում է կառուցել ջարդող տեսակավորող կայան:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակայանների ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցան-վազող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով: Ջրառը նախատեսվում է իրականացնել Լեռնանիստ գյուղից: Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են: Բացահանքի տարածքը թափվող հորդ անձրևային ջրերի մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով, իսկ մյուս մասը հեռանում է ինքնահոս կերպով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝ փոշիացումը նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին կատարել ջրցանում՝ օրը 3 անգամ: Բացահանքում աշխատող տեխնիկայի շարժիչների



վառուցքները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը բացահայնքում պետք է արգելվի: Մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչն արտանետումը մթնոլորտ թույլ կտա կրճատել գազերի թափոնները պարբերաբար դուրս բերել բացահանքի տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառել: Արգելվում է արտհրապարակից դուրս խախտել լրացուցիչ տարածքներ, տեղադրել թափոններ և այլն: Հակահրդեհային միջոցառումների կիրառում:

Հողաբուսական շերտի (հողի բերրի շերտ) ապարների ընդհանուր ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 28320.0 խմ, որի հեռացումը և հետագա պահպանումը բացահանքի տարածքից կատարվելու է ՀՀ կառավարության 08.09.2011թ-ի թիվ 1396-Ն և 02.11.2017թ-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում հարթեցվելու է բացահանքի հատակը և արտադրական հրապարակի տարածքները: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր տարածքը կազմելու է 19.08հա: Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափ բուլդոզեր համալիրով: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացման համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված հաշվարկները կատարվել են համաձայն ՀՀ կառավարության 18.08.2021թ-ի «ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՑԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1352-Ն որոշման պահանջների համաձայն: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի շրջանակներում բացահանքի և արտադրական հրապարակի ռեկուլտիվացված տարածքները պարարտացվելու են գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով: Լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերը կազմելու են՝ 2028.9 հազար ՀՀ դրամ, կենսաբանական վերակուլտիվացման համար՝ 3816.0 հազար ՀՀ դրամ, ընդհանուր ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 5844.9 հազար ՀՀ դրամ: Այնուհետև կատարվելու է խոտաբույսերի, մասնավորապես առվույտի ցանկ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգնի իրականացումը ու դրա արդյունքների տրամադրումը լիազոր մարմնին իրականացվելու է կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջների համաձայն: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազար ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության փուլերում Կոտայքի մարզի Լեռնանիստ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հարավային աշխատանքների բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան արդյունահանման աշխատանքների թույլատրելի նորմերի սահմաններում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլիանան:



Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջներով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
3. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը՝ կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը:
4. Ջարդիչ կայանքի տեղադրման դեպքում անհրաժեշտ է՝ «Օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեության նախագծման փաստաթղթերը ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել «Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Էդգար Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Լանջաղբյուրի բազալտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան